ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

10.10.2015թ. ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան /դեկան/
Քարտուղար Գ. Առուշանյան /քարտուղար/
Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Գ. Առուշանյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյան, Ա. Պոտոսյան, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Վ. Առաքելյանը, Լ. Մելիքջանյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Ալեքսանյան, ՈՒԳԸ նախագահ Լ. Բլբուլյանը, Ս. Սաֆարյանը:

Օրակարգ

1.Քննարկել և հաստատել ֆակուլտետի 2015-16 ուս. տարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակները:

/Զեկ. Հ. Մարզպանյան/
/Զեկ. Գ. Հովհաննիսյան/

2.Քննարկել և հաստատել ըստ ֆակուլտետում իրականացվող կրթական ծրագրերի ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարերը:

/Զեկ Հ. Մարզպանյան/
/Զեկ. Գ. Հովհաննիսյան/

3.Ընթացիկ հարցեր

1. Լսեցին - Հ. Մարզպանյան

Հ. Մարզպանյանը նշեց, որ ավարտական աշխատանքը բակալավրիատի ուսանողի կողմից ավարտական ուսումնական տարվա ընթացքում կատարվող պարտադիր հետազոտություն է, որը հավաստում է բակալավրի կրթական ծրագրով նախատեսված ելքային գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Ավարտական աշխատանքը նպատակ է հետապնդում ուսանողների մոտ զարգացնել ինքնուրույն գիտական հետազոտություններ իրականացնելու, ստեղծագործական վերլուծություն և ընդհանրացումներ կատարելու, տեսական և գործնական նյութերն ուսումնասիրեու միջոցով տնտեսագիտական խնդիրները վեր հանելու, դրանց վերաբերյալ սեփական կարծիք ձևավորելու, հիմնավորելու և գրավոր շարադրելու, ինչպես նաև գիտական հիմնավորված առաջարկություններ մշակելու և ներկայացնելու ունակություններ:

Հ. Մարզպանյանը նշեց, որ համաձայն տնօրինության կողմից ներկայացված պահանջների 2015 -2016 ուս. տարում նախատեսված ավարտական աշխատանքի թեմաների նախագծերը ուսանողներին է տրամադրվել մինչև ս/թ մայիսի 20-ը:

Որոշակի ճշգրտումներից հետո ամբիոնում կատարվել է ավարտական աշխատանքների բաշխում ըստ դասախոսների և ուսանողների:

Նա նշեց, որ «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի անհատական ծանրաբեռնվածությանը համապատասխան՝ ամբիոնի կողմից ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվում ավարտական աշխատանքների՝ ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակները /նախագիծը կցվում է/:

Լսեցին - Գ. Հովհաննիսյան

Նա նշեց, որ ավարտական աշխատանքի թեմաների նախագծերը ուսանողներին է տրամադրվել դեռևս մայիսին: Սեպտեմբերին կայացած «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի նիստում քննարկվել և ճշգրտվել են ավարտական աշխատանքի թեմաները հաշվի առնելով նաև ուսանողների առաջարկությունները: Համաձայն անհատական ծանրաբեռնվածության «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի նիստում հաստատվել է ավարտական աշխատանքների ցանկը ըստ ղեկավարների և ուսանողների ու ներկայացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը/նախագիծը կցվում է/:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չորրորդ կուրսում ուսումնական պլանով նախատեսված է նաև կուրսային աշխատանք /առաջին կիսամյակում/, կուրսային աշխատանքի թեմաները հնարավորինս մոտեցրած է ավարտական աշխատանքի թեմատիկային և կազմում է նրա մի մասը:

Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ավետիսյանը

Քանի որ , ավարտական աշխատանքներրի նախագծերը ուսանողներին տրամադրվել է մայիսին, դա հնարավորություն է տվել ծանոթանալ թեմային և առաջարկություններ անել թեմայի վերաբերյալ ուսանողների առաջարկություններն ու նկատառումներն հաշվի առնել:

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի երկու մասնագիտությունների 2015-16 ուս. տարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակները:

2. Լսեցին - Հ. Մարզպանյանին

Հ. Մարզպանյանը նշեց, որ ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարում ընդգրկված են «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ

պետական չափորոշիչներին համապատասխան մասնագետներ պատրաստելու համար անհրաժեշտ դասընթացների առանցքային հարցերը: Ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարը ամբողջությամբ համապատասխանում է կրթական ծրագրի պահանջներին և ներկայացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը/նախագիծը կցվում է/ :

Լսեցին - Գ. Հովհաննիսյանին

Գ. Հովհանիիսյանը, նշեց, որ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնում քննարկվել և հաստատվել է ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարը, որը համապատասխանում է «Սերվիս» մասնագիտության կրթական չափորոշիչներին: Ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարը ամբողջությամբ համապատասխանում է կրթականծրագրերի պահանջներին և ներկայացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը /նախագիծը կցվում է/

Արտահայտվեցին - Ա. Պոտոսյանը, Վ. Առաքելյանը

Նրանք նշեցին, որ ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարի նախագծերը նախապես ներկայացվել է ամբիոնի դասախոսներին, որոնց դիտողությունները և նկատառումները ամբողջովին հաշվի են առնվել և քննարկվել են համապատասխան ամբիոնների նիստերում:

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի երկու մասնագիտությունների 2015-16 ուս. տարում նախատեսված ամփոփիչ մասնագիտական քննության հարցաշարերը

3.Լսեցին -ընթացիկ հարցեր

3.1. Ֆակուլտետի երկու մասնագիտությունների խորհրդատուների զեկուցումներն առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

/ԶԵկ. Ա. Սարիբեկյան/
/Զեկ. Պ. Ասիլբեկյան/
Լսեցին - «Տնտեսագիտության տեսության» մասնագիտության խորհրդատու Ա. Սարիբեկյանին

Նա նշեց, որ տարեսկզբից ուսանողների հետ կատարվել են որոշակի աշխատանքներ, որոնց հիմնական նպատակն ուսանողներին ընթացիկ քննություններին նախապատրաստելն էր: Բացատրական աշխատանքներ եմ կատարել հատկապես առաջին կուրսի ուսանողների հետ, որոնց ծանոթացրել եմ կրեդիտային համակարգով ուսուցման կարգին:

Ժամանակին ուսանողների են տրամադրվել ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների բոլոր հարցաշարերը /10 ընթացիկ քննություն, 5 ընթացիկ ստուգում/: Ուսանողների բացատրվել է նաև ընթացիկ թեստերի լրացման և ստուգման կարգերը:

Քանի որ ըստ կրեդիտային համակարգի յուրաքանչյուր մասնագիտության գծով նախատեսված է լրացուցիչ պարապմունքների ժամանակացույց, ապա ըստ այդ ժամանակացույցի կատարվել է խորհրդատվություն:

Լսեցին - «Սերվիս» մասնագիտության խորհրդատու Պ. Ասիլբեկյանին

Պ. Ասիլբեկյանը նշեց, որ լուրջ ուշադրություն է դարձվել ուսանողներին առաջին ընթացիկ քննությունների նախապատրաստելու ուղղությամբ: Այս առումով հատկապես կարևորել եմ առաջին կուրսի հետ տարվող աշխատանքներին: Նրանց բացատրվել է կրեդիտային համակարգով ուսումնառության կարգը, ինչպես նաև իրենց իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում նաև քննությունների բողոքարկման և լրացուցիչ պարապմունքների խորհրդատվության կարգերը: Ժամանակին ուսանողների են տրամադրվել ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների բոլոր հարցաշարերը /8 ընթացիկ քննություն, 6 ընթացիկ ստուգում/:

Արտահայտվեցին - Գ. Ավետիսյանը, Ա. Պոտոսյանը

Արտահայտվողները նշեցին, որ ֆակուլտետի երկու մասնագիտությունների ուսումնական խորհրդատուները առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքները կազմակերպել են բարձր մակարդակով: Ուսումնական խորհրդատուների կատարած աշխատանքը կարելի է գնահատել լավ:

Որոշեցին - Ֆակուլտետի երկու մասնագիտությունների ուսումնական խորհրդատուների գործունեությունն առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ գնահատել լավ:

3.2 Ֆակուլտետի <Ընդհանուր տնտեսագիտության> ամբիոնի դասախոսներ Էդգար Հովհաննիսյանի և Գևորգ Մինասյանի պարգևատրման մասին

/Զեկ Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ ֆակուլտետի աշխատանքների արդյունավետության բարձրացման համար միշտ էլ օգտագործվել են տարբեր տեսակի խրախուսման ձևեր, այդ թվում նաև դրամական պարգևատրում: Ֆակուլտետի դեկանը ներկայացրեց, որ Է. Հովհաննիսյանը և Գ. Մինասյանը որպես երիտասարդ մասնագետներ բավականին հաջողությամբ կարողանում են կիրառել դասավանդման նորարարական, ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ. որի

համար էլ առաջարկում եմ վերոհիշյալ դասախոսների ներկայացնել դրամական պարգևատրման:

Արտահայտվեցին - Հ. Մարզպանյանը, Գ. Ավետիսյանը

Նրանք նշեցին, որ իսկապես Է. Հովհաննիսյանը և Գ. ՄԻնասյանը կատարել են մեծ ծավալի աշխատանքներ և լիովին արժանի է դրամական պարգևատրման:

Որոշեցին - Ֆակուլտետի <Ընդհանուր տնտեսագիտության> ամբիոնի դասախոսներ Է. Հովհաննիսյանին և Գ. Մինասյանին ներկայացնել դրամական պարգևատրման:

3.3.«Տնտեսագիտության» ֆակուլտետի կանոնադրության մշակման աշխատանքների համար աշխատանքային ժամանակավոր խմբի ստեղծման մասին:

/Զեկ. Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ 2015 թվականի ապրիլից 29-ից փոխվել է ԵՊՀ կազմակերպա - իրավական կարգավիճակը, այն դարձել է հիմնադրամ: Ֆակուլտետներին տրվել է հանձնարարական ֆակուլտետի հիմնադիր փաստաթղթերը համապատասխանեցնել նոր կարգավիճակին՝ ԵՊՀ Իմ նոր կանոնադրությանը /հաստատված 29.04.2015թ /: Տվյալ գործընթացը կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է ձևավորել ժամանակավոր աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

1. Ն. Խուդավերդյան
2. Գ. Ավետիսյան
3. Պ. Ասիլբեկյան

Արտահայտվեցին- Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը

Նրանք նշեցին, որ կազմված աշխատանքային խումբն ի զորու է մինչև ս.թ. հոկտեմբերի 31-ը մշակել համապատասխան կանոնադրությունը և ներկայացնել ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը :

Որոշեցին - հաստատել «Տնտեսագիտության» ֆակուլտետի կանոնադրության մշակման աշխատանքների համար աշխատանքային ժամանակավոր խմբի առաջարկված կազմը:

Գիտխորհրդի նախագահ *Ն. Խուդավերդյան*

Քարտուղար *Գ. Առուշանյան*